

ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվ.
Բյուրականի աստղադիտարանի
գիտական և գիտակազմակերպական
գործունեության
2025թ. տարեկան հաշվետվություն



ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի
գիտահետազոտական անձնակազմի ընդհանուր ժողով
Բյուրական, 16 դեկտեմբերի 2025թ.

Ներկայացվող հարցերը

- Աշխարհի աստղագիտությունը և Հայաստանը (1)
- Կարգավիճակները և կառուցվածքը (4)
- Կադրերը, ԳՀ բաժինները, ընթացիկ նախագծերը (6)
- **Գիտական գործունեությունը.** նախագծեր, դրամաշնորհներ, համագործակցություն, հրապարակումները
- **Կարևորագույն գիտական արդյունքները** (14)
- **Հրապարակումները, վերլուծություն** (10)
- **Գիտակազմակերպական գործունեությունը.** մասնակցություն գիտաժողովներին/դպրոցներին, զեկուցումներ, գիտապաստառներ, սեմինարներ, գործուղումներ (19)
- Ենթակառուցվածքային բաժինները (6)
- Տնօրինություն, ԳԽ, ՄԽ
- Ինժեներատեխնիկական ոլորտը (1)
- Տնտեսական գործունեությունը (1)
- Հանրային կապերը (6 + 2)
- Ֆինանսները (4)
- Այլ գործունեություն. դասավանդում, խմբագրում, այլ
- **Կարևորագույն փաստերը և իրադարձությունները** (2)

Հայաստանն աշխարհի աստղագիտական քարտեզի վրա

Աշխարհի աստղադիտարանները՝ 700

Պրոֆեսիոնալ աստղագետներ՝ 30 000 + ֆիզիկոսներ

ՄԱՄ անդամ երկրներ՝ 87; ՀՀ – 25 անդամ

ՄԱՄ անդամ աստղագետներ՝ $11,492 + 1,224 = 12,716$

ՄԱՄ տարածաշրջանային կենտրոններ՝ 10+1, SCWA ROAD

Խոշոր աստղադիտակներ (8մ-10մ)՝ 14

Միջին աստղադիտակներ. 3մ-4մ՝ 30, 2մ-3մ՝ 70; BAO-2.6

Վիրտուալ աստղադիտարաններ՝ 20+2+1, ArVO

Աստղագիտական ամսագրեր՝ 91+ (Afz/Ap+ComBAO)

ՄԱՄ գիտաժողովներ՝ 403 (7-ը՝ Հայաստանում)

ՄԱՄ նախագահներ՝ 34 (Վ. Համբարձումյան 1961-1964)

Աստղագիտական ընկերություններ՝ EAS 32 (ՀԱԸ/ArAS)

Հայկական անվանումներով տիեզերական օբյեկտներ՝ 14,500+

Տարածաշրջանային երկրների մրցակցությունը

ԲԱ կարգավիճակները



ՀՀ ԳԱԱ ԳՀ ինստիտուտ, 32-ից մեկը (1946-2025)
ՀՀ Ազգային արժեք, 3-ից մեկը Հայաստանում
ՄԱՄ ՀԱԿԱ տարածաշրջանային աստղագիտ. կենտրոն, 11-ից մեկը
ԲԱ՝ ՄԱՄ Նշանավոր աստղագիտական ժառանգության ցանկում
ՅՈՒՆԵՍԿՕ MOW փաստագրական արժեքը (2011)
Մարգարյանի շրջահայության թվայնացման նախագիծը՝ DFBS
Հայկական վիրտուալ աստղադիտարանը (ՀՎԱ), 20-ից մեկը
Հայկական աստղագիտական ընկերությունը (ՀԱԸ, 1999)
ՄԱՄ գիտաժողովներով՝ լավագույն 10-ի թվում
BISS ամառային դպրոցները՝ լավագույն 3-ի թվում
EAS 2007թ. (JENAM-2007) տարեկան համագումարը
ՀՀ Ազգային հերոս Վ. Համբարձումյանի տուն-թանգարանը
ԲԱ պանթեոնը՝ ժամանակակից հուշարձանների թվում
ԲԱ ճարտարապետական համալիրը՝ եզակի կառույց (2021)
ԲԱ այգին՝ ՀՀ դենդրոպարկերի թվում (2017)
Գիտական տուրիզմի կենտրոն՝ ՄԱՄ և ՏՀԻ
ԲԱ կրթական և հանրային գործունեությունը (2009-ից)

ԲԱ գիտական ուղղությունները

Հետազոտությունների հիմնական ուղղությունները կապված են անկայուն օբյեկտների և երևույթների ուսումնասիրության հետ.

- աստղառաջացման երևույթ, աստղառաջացման տիրույթներ, երիտասարդ աստղեր,
- միգամածություններ, դրանց կապն աստղերի հետ, առաջացման մեխանիզմն ու էվոլյուցիան,
- գալակտիկաների միջուկային և աստղառաջացման ակտիվություն,
- տեսական հետազոտություններ՝ ճառագայթման տեղափոխման տեսություն, սպեկտրների մեկնաբանություն,
- նոր ուղղություններ՝ աստղաքիմիա, աստղակենսաբանություն, բարձր էներգիաների աստղաֆիզիկա և այլ:

Բազային ծրագիր Ա-3 «Անկայուն երևույթների դերը տիեզերական օբյեկտների էվոլյուցիայում»:

DIRECTOR**SCIENTIFIC COUNCIL****RESEARCH DEPARTMENTS**

Astronomical Surveys

Non-Stable Phenomena

Young Stellar Objects

Astrochemistry, Astrobiology and Exoplanets

Active Galaxies

Theoretical Astrophysics

High Energy Astrophysics

Compact Cosmic Objects and Relativistic Gravity

Archaeoastronomy and Cultural Astronomy

INFRASTRUCTURAL UNITS**Observational Astronomy Department**

2.6m telescope

1m Schmidt telescope

Small telescopes

Observational equipment

Astroinformatics Department

Computer Network and Internet

BAO Webpage

Scientific Library

Astronomical Plate Archive

Armenian Virtual Observatory

Computational Astrophysics, Astrostatistics

Centre for Applied Astronomy**IAU Regional Centre****ADMINISTRATION**

Deputy Director

Scientific Secretary

HUMAN RESOURCES**ACCOUNTANCY****ENGINEER-TECHNICAL STAFF**

Engineers and Technicians

Mechanical Workshop

ECONOMIC STAFF

Drivers

Economic Workers and Gardeners

Security Service

Cleaners

PUBLIC RELATIONS

Promotion and Press Service

External Relations

Fundraising

Event Management

Publishing Service

Excursions Service

V. Ambartsumian House-Museum

Educational and Outreach Programmes

YOUNG SCI-ENGINEERS COUNCIL, COMMITTEES

Գիտահետազոտական բաժիններ

- Տեսական աստղաֆիզիկա (Արթուր Նիկողոսյան + 1)
- Բարձր էներգիաների աստղաֆիզիկա (Գագիկ Տեր-Ղազարյան + 1 + 1)
- Տիեզերական կոմպակտ օբյեկտներ և ռելյատիվիստական գրավիտացիա (Արմեն Սեդրակյան, Գերմանիա + 2 + 2 + 3)
- Աստղագիտական շրջահայություններ (Արեգ Միքայելյան + 10)
- Անկայուն երևույթներ (Հայկ Հարությունյան + 6)
- Երիտասարդ աստղային օբյեկտներ (Տիգրան Մադաթյան + 1)
- Աստղաքիմիա, աստղակենսաբանություն և արտարեգակնային մոլորակներ (Արարատ Եղիկյան + 4)
- Ակտիվ գալակտիկաներ (Ռուբեն Անդրեասյան + 3 + 1)
- Պատմամշակութային աստղագիտ. (Հայկ Մալխասյան + 2)
- ԳՀ բաժիններից դուրս՝ Է. Ս. Պարսամյան
- Ասպիրանտներ/հայցորդներ/պայմանագրային՝ 0 + 6 + 4

ԲԱ գիտական խորհրդատուները

- *Prof. Elma Parsamian* (BAO, Armenia)

Foreign Advisers

- *Dr. Vladimir Airapetian* (NASA, USA)
- *Dr. George Alecian* (ObsPM, France)
- *Dr. Noreta Andreasian-Thomas* (UVI, USA)
- *Dr. Tigran Arshakian* (Köln, Germany)
- *Dr. Valeri Hambaryan* (Jena, Germany)
- *Dr. Garik Israelian* (IAC, Spain)

Projects Advisers

- *Prof. Michel Dennefeld* (IAP, France)
- *Prof. Lex Kaper* (Amsterdam Univ., Netherlands)

Կադրեր

Գիտաշխատողներ 39

ՀՀ ԳԱԱ ակադ.	-	գլխավոր գ. ա.	3
ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ	1	գիտ. խորհրդատու	1
Գիտության դոկտորներ	4	առաջատար գ. ա.	6
Գիտության թեկնածուներ	20	ավագ գ. ա.	6
Առանց գիտ. աստիճանի	14	գիտաշխատող	11
Հայցորդ	6	կրտսեր գ. ա.	6
Պայմանագրային	4	ավագ լաբորանտ	6

Այլ աշխատակիցներ 65

Գիտա-օժանդակ	6	Վարորդներ	2
Հաշվապահություն	3	Բանվորներ	6
Հանրային	6	Պահակներ	19
Ինժեներներ	9	Հավաքարարներ	5
Տեխնիկներ	6	Այլ տնտեսական	3

Երիտասարդ մասնագետներ

Աշխատում են թեկնածուական թեզի վրա.

Գ. Միքայելյան, Լ. Համբարձումյան, Դ. Անդրեասյան, Ա. Սուքիասյան, Հ. Մալխասյան և այլք

Նոր ընդունված երիտասարդներ.

Վարդգես Գրիգորյան, Արման Խաչատրյան, Մարինե Թորոսյան; Արփինե Թորոսյան, Սիրուշ Խաչատրյան

ԵԳՃԽ նոր ընտրություններ

ՀՀ ԳԱԱ ԵԳԽ

Արտասահմանյան ասպիրանտներ/հայցորդներ – Մարիա Ռահ (Իրան), Սամա Շամյար (Իրան/ՀՀ), Հնդկաստան, ***ԻԱՊԻ ասպիրանտներ*** Ֆրանսիայից և ***մագիստրոսներ*** UFAR-ից

Ստաժոր – Քենդիս Քորժերոն (Ֆրանսիա)

Ընթացիկ գիտական նախագծերը

- **SC Advanced Research Grant 21AG-1C044 (2021-2026):** *Star Forming Regions: Origin and Evolution*, **PI: Elena Nikoghosyan**
- **SC Advanced Research Grant 21AG-1C053 (2021-2026):** *Revelation of Early Stages of Gal. Evolution by Means of Multiwavelength Study of Active Galaxies*, **PI: Areg Mickaelian**
- **SC Remote Laboratories Establishment Program 22RL-1C039 (2022-2027):** *Search and identification of high-velocity stars by means of dynamical ejections from multiple stars and supernova explosions*, **PI: Valeri Hambaryan**, Co-PI: Satenik Ghazaryan
- **SC Remote Laboratories Establishment Program 24RL-1C010 (2024-2029):** *Relativistic Transport and Hydrodynamics in Compact Stars*, **PI: Armen Sedrakyan**, Co-PI: Arus Harutyunyan

Ընթացիկ գիտական նախագծերը

- **ANSEF 2025-2026**, *The Early Evolution and the Kinematic History of RCW38 Super Star Cluster*. **PI: Naira Azatyan**
- **ANSEF 2025-2026**, *Search and Studies of X-ray AGN and Galaxies*. **PI: Hayk Abrahamyan**
- **Համբարձումյանական հետազոտական դրամաշնորհ 2025-2026**: Բարձր գալակտիկական լայնություններում թուլլ պայծառությունների կարմիր հսկաների և հսկաների ասիմպտոտիկ ճյուղի աստղերի բազմակողմանի ուսումնասիրություն հիմնված Gaia DR3 կատալոգի տվյալների հիման վրա: **Ղեկավար՝ Կամո Գիգոյան**
- **Համբարձումյանական հետազոտական դրամաշնորհ 2025-2026**: Հնարավոր կենսանշանների (բիոմարկերների) որոնում Պարսամյանի գիսավորաձև միգամածություններում (ՊՄ), ինչպես նաև ածխածին պարունակող միացություններով աստղակերպերում: **Ղեկավար՝ Արարատ Եղիկյան**

Ընթացիկ գիտական նախագծերը

Նախագիծ	Տարիներ	Ֆինանսներ	Կազմը
21AG-1C044	2021-26	166,800,000	1+6+2
21AG-1C053	2021-26	153,000,000	1+6
22RL-1C039	2022-27	101,840,000	1+3
24RL-1C010	2024-29	107,000,000	1+1+3
ANSEF	2025-26	USD 7500	1+3
ANSEF	2025-26	USD 7500	1+5
ՎՀ նախագիծ	2025-26	5,068,500	1+3
ՎՀ նախագիծ	2025-26	5,068,500	1+4

Այլ դրամաշնորհներ

EU Erasmus+ International Credit Mobility 2025, *Project Management* – Արեգ Միքայելյան, Հայկ Աբրահամյան, Գոռ Միքայելյան, Գայանե Բալեյան, Լիլիթ Դարբինյան

IAP visitors grant 2025 – Areg Mickaelian (IAP, Paris, France)

VA Prize foreign fellowship grant 2025-2026 – Derenik Andreasyan (Leiden, Neth.)

VA Prize foreign fellowship grant 2025-2026 – Naira Azatyan (Leiden, Neth.)

ԲԿԳԿ գիտական միջոցառումներ – Հայ-վրացական կոլոքվիում 2025 (775,000)

ԲԿԳԿ գիտական միջոցառումներ – ASBD-3 2025 (950,000)

ԲԿԳԿ երիտասարդական դպրոցներ – 4RASS 2025 (1,000,000)

UNESCO pp – Astronomical Heritage of the Middle East 2 2025 (USD 20,000)

ՄԱՄ Division C – CAP Conference 2026 (USD 5000)

VA Prize գիտական միջոցառումներ 2025-2026 – CAP-2026 (1,017,500)

VA Prize գիտական միջոցառումներ 2025-2026 – 10BISS (1,520,550)

VA Prize գիտական միջոցառումներ 2025-2026 – BAO-80 (1,520,550)

ԵԳԱԾ վերապատրաստման ծրագիր – Դերենիկ Անդրեասյան (ALMA school 2026)

ԲԿԳԿ գիտական միջոցառումներ – CAP-2026 (2026)

ԲԿԳԿ գիտական միջոցառումներ – BAO-80 (2026)

ԲԿԳԿ երիտասարդական դպրոցներ – 10BISS (2026)

Տեսական աստղաֆիզիկա

(Ֆմգդ Արթուր Նիկողոսյան + 1)

Հաշվետու տարում շարունակվել են մեր կողմից առաջարկված մի մեծ ծրագրի շրջանակում կատարվող հետազոտությունները, որոնք նվիրված են էներգիայի անկայուն աղբյուրների ազդեցության ներքո գտնվող կլանող և ցրող միջավայրերում գծային սպեկտրների փոփոխություններին: Առանձնակի ուշադրության առարկա են հանդիսացել նշված օպտիկապես ակտիվ միջավայրերում տարբեր տիպի ֆոտոնների գտնվելու միջին ժամանակների մեծությունները: Առաջին անգամ այդ մեծությունների համար արտածվել են պարզ բանաձևեր, որտեղ օգտագործվում են միջավայրում ցրումների միջին թվի համար Համբարձումյանի կողմից ստացված հայտնի արդյունքը, ինչպես նաև թեմայի ղեկավարի կողմից 1986թ. ստացած արդյունքը, որը վերաբերում է անընդհատ սպեկտրում կլանման ազդեցությանը միջավայրում ֆոտոնների վերապրելու միջին ժամանակի վրա: Կառուցվել են նշված մեծությունների Նեյմանի շարքերը, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել հետազոտվող մեծությունների վարքի մասին ոչ միայն ճառագայթային հավասարակշռության պարագայում, այլ նաև այն դեպքում, եռբ այն բացակայում է: Բացի նշված ժամանակային միջին մեծություններից հաշվարկվել ու ուսումնասիրվել են միջավայրում կատարվող ցրումների միջին թվերը անդրադարձած ու անցած հոսքերի համար, այնպես էլ միջավայրում թերմալիզացված ֆոտոնների համար: Հաշվարկվել են նրանց քրոնոմետրիան բնորոշող PDF (Probability Density Function) և CDF (Cumulative Distribution Function) հավանականային բաշխումները, նկարագրվել նրանց առանձնահատկությունները:

Բարձր էներգիաների աստղաֆիզիկա

(Ֆմգդ Գագիկ Տեր-Ղազարյան + 1 + 1)

- Մշակվել և տպագրվել է « $\widetilde{MS}_p$ -Տելեպարալել ՍուպերԳրավիտացիայի» ($\widetilde{MS}_p$ -TSG) տեսությունը, ինչը գլոբալ «MSp-SUSY» տեսության լոկալ ընդլայնումն է: Լոկալ $\widetilde{MS}_p$ -TSG տեսության շրջանակներում, ուսումնասիրվել է «արագացումով շարժման և իներցիայի էֆեկտների» ֆիզիկան: Այս մեծաձևավալ աշխատությունը ներառում է հետևյալ երեք տեսությունները՝ «MS-գեր-գրավիտացիա», «MS-հեռազգացմունքային գեր-գրավիտացիա», «Ընդհանուր MS դեֆորմացիա և իներցիոն էֆեկտներ»:
- Հեղինակի կողմից վերջերս առաջարկված նոր՝ «Արդյունարար դաշտի տրոհման» (ԱԴՏ) եղանակով կառուցվել է կլանող-ցրող կիսանվերջ միջավայրից ճառագայթման դիֆուզ անդրադարձման խնդրի բացահայտ լուծումը՝ իզոտրոպ ցրման տարրական գործողությունում ըստ հաճախությունների վերաբաշխման կամայական օրենքի դեպքում: Ընդգծվում է նոր մոտեցման առավելությունը «ավանդական» մոտեցման նկատմամբ: Այս խնդրի չորս անկախ փոփոխականից կախված լուծումը հաջողվել է արտահայտել մի փոփոխականից կախված երկու օժանդակ ֆունկցիաների միջոցով: Վերջիններս որոշվում են ոչ գծային երկու ինտեգրալ հավասարում և մի հանրահաշվական հավասարում պարունակող միասնական համակարգից: Ստացված են նաև նոր և ավանդական եղանակներում առկա օժանդակ ֆունկցիաների միջև երկկողմանի կապերը բացահայտ տեսքով:

Տիեզերական կոմպակտ օբյեկտներ և ռելյատիվիստական գրավիտացիա

(Ֆմգդ Արմեն Սեդրակյան (Գերմանիա) + 2 + 3 + 2)

Բոլցմանի կինետիկ տեսությունը մեթոդներով ուսումնասիրվել են մագնիսացված նեյտրոնային աստղիներքին պատյանի էլեկտրահաղորդականության, ջերմահաղորդականության և ջերմաէլեկտրաշարժ ուժի գործակիցները պլազմայի հեղուկ վիճակում, հաշվի են առնվել էլեկտրոնների ցրումը իոնների և ազատ նեյտրոնների վրա: Ուսումնասիրվել է նաև աստղի արտաքին պատյանի էլեկտրահաղորդականությունը, որի մեջ առաջին անգամ հաշվառվել է պլազմայի պոզիտրոնային բաղադրիչի ներդրումը: Ցույց է տրվել, որ պոզիտրոնների դերը կարևոր է 1 ՄԷՎ և ավելի բարձր ջերմաստիճանների դեպքում: Հաշվվել է տաք քվարկային նյութի ջերմաէլեկտրաշարժ ուժի գործակիցը ուժեղ կապված ռեժիմում, օգտագործվել է Կուբոյի բանաձևերի մեթոդը:

Աստղագիտական շրջահայություններ (Ֆմգթ Արեգ Միքայելյան + 10+1)

- Կատարվել է ռենտգենյան ճառագայթում ունեցող բլազարների մանրակրկիտ հետազոտություններ: Աշխատանքի ընթացքում կատարվել է նույնականացում հայտնի բլազարների կատալոգի (BZCAT) և ռենտգենյան տարբեր արբանյակներից ստացված տվյալների միջև (ROSAT, Chandra, XMM-Newton, SWIFT, INTEGRAL): Արդյունքում ունեցել ենք 1535 նույնականացված աղբյուրներ: Աշխատանքի ընթացքում հաշվել ենք դրանց բոլորի օպտիկական և ռենտգենյան հոսքերը, լուսատվությունները, բացարձակ աստղային մեծությունները, սպեկտրային ինդեքսները: Օգտագործելով ռենտգեն-օպտիկա լուսատվությունների հարաբերությունները, գույն-գույն դիագրամները, ինչպես նաև մյուս ստացված տվյալները, փորձ է արվել ստանալ դրանց առանձնահատկությունները և գտնել դրանց միջև տարբերություններ:
- DFBS շրջահայությունից հայտնաբերվել են մեծ քանակությամբ նոր C-CH, C-N, ածխածնային աստղեր Գալակտիկայի հալոյում, հարթությունից 8 կպս և ավելի մեծ բարձրությունների վրա: Սպեկտրային դասերի հաստատումը կատարվել է օգտագործելով Gaia DR3 տվյալների շտեմարանը: Որոշ նոր CH աստղեր ունեն ավելի քան - 500 կմ/վ տեսագծային արագություններ: Հայտնաբերվել են նաև մեծ թվով կապույտ աստղանման օբյեկտներ (մոտ 1200) գերմանուշակագույն ավելցուկով, ինչպես նաև մեծ թվով էմիսիոն օբյեկտներ (մոտ 250, աստղեր և գալակտիկաներ): Պարզվել է, որ աստղերի դեպքում մեծ թիվ են կազմում կրկնակի համակարգերը:

Անկայուն երևույթներ (Ֆմգթ Հայկ Հարությունյան + 6)

- Հետազոտվել է հիերարխիկ տարբեր մակարդակներում անկայունության երևույթները մութ էներգիայի և բարիոնային նյութի փոխազդեցությամբ մեկնաբանելու խնդիրը: Եզրակացություն է արվել, որ ֆիզիկայի օրենքների ինքնահամաձայնեցված կիրառումը բարիոնային բոլոր կոնֆիգուրացիաներում հանգեցնում է ավելցուկային էներգիայի կուտակման, որի արտազատումը դիտվում է որպես անկայուն երևույթների բազմազանություն: Աշխատանքը զեկուցվել է *«Աստղագիտական շրջահայություններ և մեծ տվյալներ 3»* գիտաժողովին:
- Առաջարկվել է մեթոդ գալակտիկաների կույտերի կինեմատիկան ուսումնասիրելու նպատակով: Քանի որ մութ էներգիայի կրիչի հետ փոխազդելու հետևանքով բոլոր բարիոնային կոնֆիգուրացիաները պետք է էներգիա ստանան, ինչն ընդարձակում է նույնիսկ ավանդաբար հավասարակշիռ համարվող համակարգերը, փորձ է արվել Կույսի կույտի վերաբերյալ տվյալները կիրառել վերևում նշված մեթոդով այդ կույտի ընդարձակման հարցը պարզելու համար: Սաացված արդյունքները լիովին համապատասխանում են սպասումներին: Աշխատանքի նախնական արդյունքները ներկայացվում են *«Բյուրականի աստղադիտարանի հաղորդումներում»* տպագրելու համար:

Երիտասարդ աստղային օբյեկտներ (Փմգդ Տիգրան Մադաթյան + 1)

Շարունակելով աստղառաջացման տիրույթներում իոնացված և մոլեկուլային հոսքերով կապված երիտասարդ աստղերի սպեկտրային ուսումնասիրությունները՝ հայտնաբերվել է երկու աստղ՝ բացառիկ հատկություններով, այն են՝ IRAS 06297+1021 (W) և V963 Mon: Նրանց սպեկտրերում դիտվում են շատ լայն արգելված առաքման գծեր (ընդհանուր լայնությունը մինչև 1000 կմ/վրկ), որոնք սպեկտրի լուծաչափի բարձրացման դեպքում բաժանվում են մի քանի բաղադրիչների: Այդպիսով, դրանք ստանում են նմանություն «սուպեր-էքսոթի»՝ PV Cep-ի հետ, որի դեպքում նույնպես բացահայտվել են արգելված գծերի նման բարդ պրոֆիլներ: Ենթադրվում է, որ այս աստղերը կարող են ներկայացնել ֆուոբի տիպի օբյեկտների առանձին ենթադաս:

Աստղաքիմիա, աստղակենսաբանություն և արտարեգակնային մոլորակներ (Ֆմգդ Արարատ Եղիկյան + 4)

Ցույց է տրվել, որ ակտիվ գալակտիկաների սպեկտրներում դիտվող [CII] 158 մկմ առաքման գծի լայնության համար (կմ/վ) ճառագայթող միջավայրում հավանաբար արդարեցված է տուրբուլենտ արագության խորանարդի և շառավղի հարաբերության օրենքը այսպես կոչվող Կոլմոգորովի կասկադային պրոցեսում փոխանցվող տուրբուլենտ էներգիայի չափաբաժնի համար: Տուրբուլենտ արագության համար ընտրվել են մինչև 600 կմ/վ ցույց տվող գալակտիկաները (որոշված գծի լայնությամբ): Քննարկվել են ճառագայթող միջավայրի տուրբուլենտ շարժման հնարավոր պատճառները: Տուրբուլենտ էներգիան փոխանցվելով կասկադային պրոցեսում ավելի փոքր չափեր ունեցող մրրիկներին, ի վերջո, գոգոելով [CII] 158 մկմ առաքման գիծը, ճառագայթվում է, և առաքված էներգիայի հզորությունը նույն կարգի է, ինչ որ հաշվարկված տուրբուլենտ էներգիայի հզորությունը, նաև դիտվող, որը պարզ երևում է բերված գրաֆիկներից:

Ակտիվ գալակտիկաներ

(Ֆմգթ Ռուբեն Անդրեասյան + 3 + 1)

Ուսումնասիրվել է բաբախիչների տարբեր դասերի եռաչափ բաշխումը Գալակտիկայում՝ օգտագործելով ավելի քան 3800 օբեկտների տվյալներ: Առանձին ուշադրության են արժանացվել միլիվայրկյանանոց և սովորական ռադիոբաբախիչների բաշխումները, ինչպես նաև այն բաբախիչների բաշխումները, որոնք միաժամանակ հանդիսանում են GRS (gamma ray sources) և ռենտգենյան աղբյուրներ: Առանձնացվել և մանրակրկիտ ուսումնասիրության են ենթարկվում բաբախիչների երկու խումբ, որոնց բաշխումները Գալակտիկայի հարթության նկատմամբ խիստ տարբերվում են նույն դասի բաբախիչների մեծամասնության բաշխումից:

Պատմամշակութային աստղագիտություն (բգթ Հայկ Մալխասյան + 2)

- Զորաց Քարեր հուշարձանում բացահայտվել են թիվ 143 ուղղորդված անցքով վեմի գործառույթը և օգտագործման ժամանակաշրջանը, որ վերաբերում է ն. ք. 19-րդ հազարամյակներին (Մալխասյան Հ. Ա.):
- Հայերեն և անգլերեն լեզուներով տպագրվել է Զորաց Քարեր հուշարձանի աստղագիտական նշանակությանը նվիրված գրքույկ ուղեցույց, որում տեղ են գտել ուսումնասիրությունների հիմնական արդյունքները (Մալխասյան Հ. Ա.):
- Ստվերաչափ գործառույթ է բացահայտվել Պորտասարի հնավայրի D կառույցի թիվ 31, 19 և 18 սյուների ուսումնասիրությամբ (Մալխասյան Հ. Ա.):
- Բացահայտվել են Նախահայկյան օրացույցին բնորոշ տարրեր Գեղարոտից պեղված վաղ բրոնզի դարի վզնոցում, Արենի-1 քարանձավից պեղված պզինձքարիդարի կարասի զարդանախշերում (Մալխասյան Հ. Ա.):
- Ավարտվել է շումերական «Էնմերկարը և Արատտայի տիրակալը» պոեմի թարգմանությունը բնագրից հայերեն: Պոեմը պարունակում է մեծաթիվ հնագույն աստղագիտական տերմիններ և օրացուցային տեղեկություններ, ինչը կարևոր է հայ աստղագիտության պատմության անհիշելի շերտերի ուսումնասիրության առումով: Մենագրություն (Դավթյան Ա. Ա.):

ԳՀ բաժինների ցուցանիշները

Ցուցանիշներ	ՏԱ	ԲԷԱ	ՏԿՕ	ԱՇ	ԱԵ	ԵԱՕ	ԱԱԱ	ԱԳ	ՊՄԱ	Ընդ
Դրամաշնորհների մասն.	-	-	4	18	6	-	6	4	-	38
Համագործակցություն	-	1	3	6	2	2	1	1	-	16
Գրախոսվող հոդված	2	5	2	17	5	3	3	4	3	44
Գիտաժողովի հոդված	-	1	-	4	-	1	-	1	3	10
Մասնակց. գիտաժողով.	1	2	2	30	14	4	4	8	4	69
Զեկուցումներ	1	2	2	34	11	4	4	6	3	67
Մասնակց. դպրոցներին	-	-	3	8	5	-	3	1	-	20
Սեմինարներ (19+4+4)	1	3	3	10	2	2	3	1	2	27
Գործուղումներ	-	-	2	24	7	3	4	-	-	40
Դասավանդում	1	-	1	4	4	2	1	-	-	13
Խմբ. գործունեություն	1	3	2	4	2	2	1	-	-	15
Գիտակազմակերպական	2	3	1	6	5	3	2	1	-	23
Հանրայնացում	-	1	1	8	3	2	2	-	3	20

ԲԿԳԿ ԱՀ 21AG-1C044

(Ֆմգթ Ելենա Նիկողոսյան + 6 + 2)

Մշակվել են IdentYS գործիքի գիտական հիմնավորումն ու գործառնական սկզբունքները: IdentYS-ը հնարավորություն է տալիս բացահայտել ԵԿ ավելցուկ ունեցող երիտասարդ աստղային օբյեկտները (ԵԱՕ) հեռավոր և ներդրված աստղակույտերում՝ հիմնականում կենտրոնանալով I և II դասի ԵԱՕ-ների վրա: Այս նպատակով օգտագործվում են մոտ- և միջին- ԵԿ լուսաչափական տվյալները և հինգ գույն-գույն դիագրամները՝ (J-H) / (H-K), K-[3.6] / [3.6]-[4.5], [3.6]-[4.5] / [5.8]-[8.0], [3.6]-[4.5] / [8.0]-[24] և [3.4]-[4.6] / [4.6]-[12]: ԵԱՕ-ների ընտրանքի մաքրությունը բարձրացվում է՝ բացառելով օբյեկտների դաշտային աղտոտումը՝ թե աստղային, և թե արտագալակտիկական աղբյուրներից: Արդյունքում ձևավորվում է ԵԱՕ թեկնածուների ցուցակ, որը ներառում է աղբյուրների նշանակումները, աստղաչափական և լուսաչափական պարամետրերը, ինչպես նաև էվոլյուցիոն փուլին վերաբերող տեղեկությունը, որը սահմանվում է ԵԿ ավելցուկի առկայությամբ՝ որոշ դիագրամներով ներկայացված չափանիշների հիման վրա: Գործիքի կիրառումը հնարավորություն է տալիս զգալիորեն պարզեցնել և արագացնել երիտասարդ աստղային բնակչության վիճակագրական վերլուծությունները տարբեր աստղառաջացման տիրույթներում՝ ներառյալ հեռավոր և ներդրված, որոնց դեպքում անհրաժեշտ է մշակել մեծ ծավալի սկզբնական տվյալներ:

ԲԿԳԿ ԱՀ 21AG-1C053

(Ֆմգթ Արեգ Միքայելյան + 6)

Բլազարները Տիեզերքի ամենաէներգետիկ աղբյուրներն են, սակայն դրանք մանրակրկիտ և համասեռ կերպով չեն ուսումնասիրվել բոլոր սպեկտրային տիրույթներում, մասնավորապես՝ ԳՄ: Իրականացվել են BZCAT v.5 կատալոգի խաչաձև համապատասխանեցումներ ԳՄ (GALEX) և ռադիո կատալոգների հետ՝ ԳՄ ճառագայթման հոսքերի և օպտիկական և ռադիո տիրույթների միջև կապը գտնելու համար: BZCAT v.5 կատալոգը ներառում է 3561 օբյեկտ: Այս օբյեկտների համար GALEX կատալոգից գտել ենք 1841 նույնացում (որը տրամադրում է հեռավոր ԳՄ՝ FUV և մոտ ԳՄ՝ NUV դիտումներ), որից 999 նույնացում FIRST-ից (որը տրամադրում է հոսքեր 1400 ՄՀg հաճախականության վրա) և 855 նույնացում SDSS-ից (որը տրամադրում է լուսաչափություն *ugriz* տիրույթներում և միջին դիսպերսիայի սպեկտրադիտություն՝ սահմանափակ թվով օբյեկտների համար): Մեր հիմնական խնդիրն է հասկանալ, թե բլազարների որ տեսակն է (BZB, BZG, BZQ և BZU) ավելի հզոր աղբյուրներ ԳՄ տիրույթում: Հաշվարկվել և վերլուծվել են ԳՄ/ռադիո և ԳՄ/օպտ հոսքերի հարաբերությունները՝ ռադիո, օպտիկական և ԳՄ տիրույթների միջև հնարավոր կապերը հասկանալու համար: Ունենալով բլազարների մեր նոր օպտիկական դասակարգումն ըստ ակտիվության դասերի, նաև վերլուծել ենք ընտրանքի ԳՄ/ռադիո/օպտ հատկությունները՝ ըստ դրանց ակտիվության դասերի:

ԲԿԳԿ ՀԼՀ 22RL-1C039

(Ֆմգթ Վալերի Համբարյան + 3)

Կարիճ – Կենտավրոս – Գայլ (Scorpius – Centaurus – Lupus) համաստեղություններում ծնված փախչող աստղերի ուսումնասիրություն: Ուսումնասիրել ենք Արեգակի շուրջը 1.7 կակ շառավղով բոլոր հայտնի OB-տիպի աստղերի և Scorpius-Centaurus-Lupus (Sco-Cen) համալիրի առանձին ենթախմբերի (1-25) համար ժամանակի մեջ հետշարժի արդյունքները: Մեր նպատակն է գտնել փախչող աստղերի թեկնածուների և Sco-Cen համալիրում ուսումնասիրվող ենթախմբերի միջև անցյալում տեղի ունեցած մերձեցումները, որպեսզի յուրաքանչյուր փախչող աստղի թեկնածուի համար գտնենք ամենահավանական ծնողական խումբը: Հետազոտության մեջ օգտագործել ենք Gaia DR3-ի և HIPPARCOS-ի աստղաչափությունը, ինչպես նաև գրականությունից հայտնի տեսագծային արագությունները: Աշխատանքում ներկայացնում ենք Sco-Cen համալիրից առաջացած ութ փախչող աստղերի թեկնածու (20-67 կմ/վ տարածական արագությամբ), ինչպես նաև 22 դանդաղ հեռացող աստղեր (10-20 կմ/վ), այսինքն՝ «քայլող» աստղեր, որոնք, հնարավոր է, իրենց ծնողական խմբից դուրս են նետվել դինամիկական արտանետման կամ գերնորի պայթյունի հետևանքով:

ԲԿԳԿ ՀԼՀ 24RL-1C010

(Ֆմգդ Արմեն Սեդրակյան + 1 + 3)

Ուսումնասիրվել են նեյտոնային աստղի պատյանի հաղորդականության գործակիցները, առաջին անգամ հաշվի են առնվել էլեկտրոն-նեյտրոն և էլեկտրոն-պոզիտրոն ցրումները: Ցույց է տրվել, որ ներքին պատյանում ջերմաէլեկտրական երևույթները կարող են ազդել մագնիսական դաշտի էվոլուցիայի վրա: Ուսումնասիրվել է տաք քվարկային նյութի ջերմաէլեկտրաշարժ ուժը Կուրոյի բանաձևերով:

Կիրառական արդյունքներ

- **Համատեղ հայ-ռուսական կայանում** 230 դիտողական գիշերների ընթացքում ընդհանուր առմամբ կատարվել են 493,400 չափումներ և վերականգնվել 430 ուղեծիր արհեստական արբանյակների համար (ղեկավար՝ **Ֆ.մ.գ.թ. Հայկ Հարությունյան**):
- Շարունակվում են աշխատանքները **նոր ծրագրային փաթեթի և դիտողական նյութի մշակման նոր մեթոդների** ստեղծման ուղղությամբ: Կատարելագործվում է նաև ավտոմատ կարգով (pipe line) մշակման փաթեթը, որը հնարավորություն է ընձեռում մշակել ամբողջ գիշերվա ընթացքում ստացված գիտական պատկերները, օգտագործելով բազմաթիվ լրացուցիչ պատկերներ (bias, flat-field, dark, etc.) (ղեկավար՝ **Ֆ.մ.գ.դ. Տ. Յու. Մադաքյան**):
- **SDSS Imaging & Spectral Analysis Tool**: Ստեղծվել է ծրագիր՝ նախատեսված գրաֆիկական միջավայրում SDSS տվյալների հետ աշխատելու համար: Թույլ է տալիս որոնել և ներբեռնել օբյեկտների պատկերներ, սպեկտրներ և կատալոգային տվյալներ: Ծրագիրը նախատեսված է աստղագետների, ուսանողների և հետազոտողների համար, ովքեր ցանկանում են արագ և հարմար կերպով աշխատել SDSS տվյալների հետ՝ առանց ձեռքով SQL հարցումների կամ վեբինտերֆեյսի (**Ֆ.մ.գ.թ. Գուրգեն Պարոնյան**):

Հրապարակումներ. ամսագրեր

Մենագրություններ, դասագրքեր – 3

Գրախոսվող միջազգային ամսագրեր (12) – A&A (6.1; 3), MNRAS (4.7; 4), Annals of Physics (3.0; 1), FASS (2.6; 1), Journal of KAS (1.5; 1), Nuclear Instruments and Methods in Physics Research A (1.4; 1), Gravitation and Cosmology (1.0; 1)

Астрофизика/Astrophysics (0.7) – Vol. 68, No. 1-4: 6 papers

ԲԱ հաղորդումներ (ComBAO) – Vol. 72, Issue 1: 14 papers

ԲԱ հաղորդումներ (ComBAO) – Vol. 72, Issue 2: 15 papers

Proceedings of Meetings (10) – BAO-AbAO 8, other 2

Էլ. կատալոգներ / Electronic Catalogs – 1

Նախատիպեր, այլ / Preprints, other papers – 0

Ամփոփագրեր / Abstracts – EAS (10+)

Գիտահանրամատչելի հոդվածներ – 0

Հրապարակումներ. ԱԳ

Հոդվածներ գրախոսվող ամսագրերում – **47**

Գիտաժողովների նյութերում – **10**, Էլ. կատալոգներ – **1**

գրքեր – **3**, հոդվածներ գրքերում – **2**, այլ հրապարակումներ
(թեզիսներ) –

Ընդամենը – **63**

Գումարային IF 2025 – **56.6** (2024 – 59.0, 2023 – 44.8, 2022 – 51.7)

Միջինը մեկ գիտաշխատողի հաշվարկով – **1.21** (գրախոսվող հոդված, 2024 – 1.35, 2023 – 1.40, 2022 – 1.37, 2021 – 1.77, 2020 – 1.34, 2019 – 1.05, 2018 – 1.45, 2017 – 0.90), **0.46** (IF ունեցող հոդված); **1.62** (բոլոր հրապարակումները), **1.45** Impact Factor:

Գրախոսվող հոդվածներ ունեցող գիտաշխատողների թիվը – **34** (87%), ԱԳ ունեցող ամսագրերում՝ **17** (44%); + Sedrakian A. D., Arshakian T. G., Hambaryan V. V., Rah M., Darbinyan L.

Հոդված չունեցող՝ 5 (2 ավագ սերնդից, 3 երիտասարդ):

Հրապարակումներ. համահեղինակներ

Համահեղինակներ (47 գրախոսվող հոդված).

42 – 1

5 – 6

2 – 4

7 – 2

4 – 8

1 – 17

6 – 1

3 – 8

Ընդամենը **173** համահեղինակ, որից **91**՝ ԲԱ-ից (53%):

Արտասահմանյան համահեղինակներ՝ **82** (47%):

Արտասահմանյան համահեղինակն. հոդվածներ՝ **16** (34%):

ԲԱ աշխատակիցները որպես առաջին հեղինակ՝ **36** (77%):

Երիտասարդ աստղագետների (<40) համահեղինակ.

հոդվածներ՝ **23** (49%), ընդամենը **38** մասնակցություն (22%):

Երիտասարդ աստղագետները (<40) որպես առաջին հեղինակ՝ **13** (28%):

Հրապարակումներ. ԳՀ բաժիններ

Ազդեցության գործակիցներ (Impact Factor – IF)

56.60 IF (ԲԱ – 29.34): SU – 0.90, ԲԷԱ – 1.80, ՏԿՕՌԳ – 4.30, ԱՇ – 9.25, ԱԵ – 1.00, ԵԱՕ – 6.45, ԱԱԱ – 0.60, ԱԳ – 1.22, ՊՄԱ – 0.60:

Ըստ ամբողջական հոդվածների.

SU – Ap 0.7, ComBAO 0.2 = **0.9**

ԲԷԱ – G&C 1.0, ComBAO 0.2 (4) = **1.8**

ՏԿՕՌԳ – AnnPhy 3.0, FASS 2.6 = **5.6**

ԱՇ – A&A 6.1, MNRAS 4.7, Ap 0.7 (4), ComBAO 0.2 (11) = **15.8**

ԱԵ – ComBAO 0.2 (5) = **1.0**

ԵԱՕ – A&A 6.1, MNRAS 4.7, JKAS 1.5 = **12.3**

ԱԱԱ – ComBAO 0.2 (3) = **0.6**

ԱԳ – NIMPRA 1.4, Ap 0.7, ComBAO 0.2 (2) = **2.5**

ՊՄԱ – ComBAO 0.2 (3) = **0.6** (+ 3 books, 2 papers in books, etc.)

Հրապարակումներ. թեմաներ

ԲԿԳԿ Առաջատար հետազոտությունների նախագծեր

Ելենա Նիկողոսյան + 8: 21AG-1C044 *Star Forming Regions: Origin and Evolution*

ComBAO (1×0.2) = **0.2**

Արեգ Միքայելյան + 6: 21AG-1C053 *Revelation of Early Stages of Galaxy Evolution by Means of MW Study of Active Galaxies*

Ap (1×0.7), ComBAO (6×0.2) = **1.9**

ԲԿԳԿ Հեռավար լաբորատ. հիմնադրման ծրագրեր

Վալերի Համբարյան, Սաթենիկ Ղազարյան + 2: 22RL-1C039
Search and identification of high-velocity stars by means of dynamical ejections from multiple stars and supernova explosions

MNRAS (2×4.7) = **9.4** / MNRAS (1×4.7) = **4.7**

Արմեն Սեդրակյան, Արուս Հարությունյան + 3: 24RL-1C010
Relativistic Transport and Hydrodynamics in Compact Stars

Annals of Physics (1×3.0), FASS (1×2.6) = **5.6**

Հրապարակումներ. բարձր ԱԳ հոդվածներ

Ամսագրերի վարկանիշի և ԲԱ հեղինակների մասնակցության տեսանկյունից առավել արժեքավոր հոդվածներ.

Movsessian T. A., Magakian T. Yu., Moiseev, A. V. 2025, Two-epoch spectral imagery of the outflow system PV Cep, A&A 693, id A79, 1-7. IF= $6.1 \times 2/3 = 4.07$

Gigoyan K. S., Sarkissian A., **Kostandyan G. R., Gigoyan K. K.,** Meftah M. 2025, Value-added catalogue of late-type stars found in the Digitized First Byurakan Survey data base: third edition, MNRAS 539, 1, 223-230. IF= $4.7 \times 3/5 = 2.82$

Movsessian T. A., Bally J., **Magakian T. Yu.,** Moiseev A. V. 2025, Complex investigations of an active star formation region in the southern part of Mon R2, MNRAS 536, 4, 3251-3261. IF= $4.7 \times 2/4 = 2.35$

Harutyunyan A. S., Sedrakian A. D. 2025, Generalized relativistic second-order dissipative hydrodynamics: Coupling different rank tensors, AnnPhy 481, id170159, 1-42. IF= $3.0 \times 1/2 = 1.50$

Arshakian, T. G., **Hambardzumyan, L. A.,** Pushkarev, A. B., Homan, D. C., Karapetyan, E. L. 2025, Studies of stationary features in jets: 3C 279 quasar I. On-sky scattering and dynamics, A&A 704, id A208, 12 p. IF= $6.1 \times 1/5 = 1.22$

Ter-Kazarian G. T. 2025, Master Space-Teleparallel Supergravity: Implications for Special Cases, G&C 31, 2, 145-165. IF= $1.0 \times 1/1 = 1.00$

Alford M., **Harutyunyan A. S.,** Sedrakian A. D., Tsiopelas, S. 2025, Bulk viscosity of two-flavor color superconducting quark matter in NS mergers, FASS 12, id1648066, 1-29. IF= $2.6 \times 1/4 = 0.65$

Hovhannisyan M. A., Mkhitarian S. A., Mahtesyan L. A., Karapetyan R. A., **Mahtessian A. P.** 2025, *Completeness of the number of quasars surrounding quasar 0851+20 as a sample for detecting cosmic voids*, NIMPRA 1073, id 170264, 1-5. IF= $1.4 \times 1/5 = 0.28$

Contreras Peña, C.; Lee, J.-E.; Herczeg, G.; ...; **Magakian, T.;** et al. 2025, The Outbursting YSOs Catalogue (OYCAT), JKAS 58, 209-230. IF= $1.5 \times 1/42 = 0.04$


«ԲԱ հաղորդումներ»

Վիկտոր Համբարձումյան, 1946-1991, 63 հատոր

- Թեմաները՝ աստղագիտություն, աստղաֆիզիկա +
- Տպագրման հաճախականությունը, լեզուն, ձևաչափը՝ տարեկան 1-2, առցանց, անգլերեն: Շարունակել հատորների համարակալումը
- Խմբագրական կազմը՝ **Հայկ Հարությունյան**՝ գլխավոր խմբագիր, Տիգրան Մաղաքյան՝ գլխավոր խմբագրի տեղակալ, Ելենա Նիկողոսյան՝ պատասխանատու քարտուղար, Արեգ Միքայելյան, Հովհաննես Պիկիշյան, Արմեն Սեդրակյան, Գագիկ Տեր-Ղազարյան: Տեխնիկական խմբագիր՝ Հայկ Աբրահամյան
- Գրախոսությունը՝ տեղական, ազդեցության գործակիցը (ԱԳ) 3 տարուց հետո, DOI
- ADS, այլ միջազգային տվյալների շտեմարաններ
- Համացանցային կայքէջ, նախկին բոլոր հատորները և համարները, խմբագրական կազմը, ընդունվող հոդվածների բնույթը, կանոններ հեղինակների համար, ևն
- Տարեկան՝ 1 հատոր, 2 համար (հունիս և դեկտեմբեր)
- **2025թ. – 72-1՝ 14+ հոդված (ԲԱ-ԱբԱ+), 72-2՝ 15+ հոդված (ASBD+)**

«Աստղաֆիզիկա»

- Խմբագրական կազմը՝ **Գագիկ Տեր-Ղազարյան**՝ գլխավոր խմբագիր, Սերգեյ Օդինցով և Վլադիմիր Գրինին՝ գլխ. խմբագրի տեղակալներ, Աշոտ Հակոբյան՝ պատ. քարտուղար, Գրիգոր Ալավերդյան, Արարատ Եղիկյան, Աղավարդ Խաչատրյան, Արթուր Հակոբյան, Տիգրան Մաղաքյան, Արեգ Միքայելյան, Նարեկ Սահակյան, Արամ Սահարյան, Ժորժ Ալեսյան, Կելորկ Աբազաջյան, Լևոն Պոգոսյան, Արմեն Սեդրակյան, Ալեքսանդր Թևզաձե, Յուսեֆ Սոբուտի և այլք
- Ազդեցության գործակիցը՝ **ԱԳ 0.700**, DOI, կարգը՝ 69/91
- Scopus, WOS, ADS, այլ միջազգային տվյալների շտեմարաններ
- Տարեկան՝ 1 հատոր, 4 համար (փետր., մայիս, օգոստոս, նոյեմբեր)
- **2025թ.** – 68-1՝ 1 հոդված, 68-2՝ 0 հոդված, 68-3՝ 1 հոդված, 68-4՝ 4 հոդված



2013-2025


2013 – 17, 2014 – 16, 2015 – 7, 2016 – 10, 2017 – 10, 2018 – 8, 2019 – 10, 2020 – 8, 2021 – 9, 2022 – 5, 2023 – 8, 2024 – 5, **2025 – 6**

PUBLICATIONS BY THE BYURAKAN OBSERVATORY ASTRONOMERS IN 1946-2025

The publication lists are given according to the **ADS database**, however *Astrofizika* and *Astrophysics* (English translation of *Astrofizika*) have been merged, as well as Russian journals *Астрон. Ж. / Astron. Reports* and *Письма в Астрон. Ж. / Astron. Letters*. E-prints have been removed if later published in journals. Also, abstracts of papers presented in meetings have been removed if later published in proceedings. In addition, some publications absent in ADS have been added.

During the last 80 years (1946-2025), 171 Byurakan astronomers have published **4157 papers** (yearly 51.96 in average), including **2976 papers** (yearly 37.20 in average) in **132 refereed journals** (including *ApJ*, *AJ*, *A&A*, *MNRAS*, *ApSS*, *Astronomische Nachrichten*, *Astrophysics*, etc.), **661 papers in proceedings of 266 meetings** (including 217 in IAU symposia and colloquia and a few others at IAU GA Joint Discussions and Special Sessions), **97 electronic catalogs**, **148 books**, 5 e-prints, 118 abstracts, 55 papers in books, and 96 other papers. The year 1984 was the most productive with 85 papers in refereed journals. However, by the total number of papers 2016 was the best: 118 publications, including 39 in refereed journals.

Figure on the right: *Distribution of the number of publications by BAO authors during 2000-2024. Papers in refereed journals, proceedings of meetings, and others are given separately.*



By Year



2025



Select the papers to export.

Export text

Export BibTeX

PUBLICATIONS BY BYURAKAN ASTRONOMERS IN 2025 (35)

All - 35, Refereed - 26, Proceedings - 8, Abstracts - 0, El. Catalogs - 1, Books - 0, E-Prints - 0, Papers in Books - 0, Popular - 0, Theses - 0, Other - 0


☐	#	Authors	Title	Publication	Short	Vol	Issue	Pages	Month	Year
☐	4157	Torres, G.; Neuhauser, R.; Hüttel, S.; Hambaryan, V.	Correction to: Spectroscopic follow-up of candidate runaway stars	Monthly Notices of the Royal Astronomical Society	MNRAS	543	3	3071-3072	Nov	2025
☐	4156	Harutyunyan, A. S.; Sedrakian, A. D.	Generalized relativistic second-order dissipative hydrodynamics: Coupling different rank tensors	Annals of Physics	AnPhy	481		id170159	Oct	2025
☐	4155	Contreras Peña, C.; Lee, J.-E.; Herczeg, G.; ...; Magakian, T. Yu.; ...; Szabó, Z. M.; Wolf, V.; Yoon, S.-Y.	The Outbursting YSOs Catalogue (OYCAT)	Journal of the Korean Astronomical Society	JKAS	58		209-230	Sep	2025
☐	4154	Alford, M.; Harutyunyan, A. S.; Sedrakian, A. D.; Tsiopelas, S.	Bulk viscosity of two-flavor color superconducting quark matter in neutron star mergers	Frontiers in Astronomy & Space Sciences	FASS	12		id1648066	Sep	2025
☐	4153	Pikichyan, H. V.	On the solution of the diffuse reflection problem from a semi-infinite medium by the method of decomposition of the resulting field (DRF) of radiation	Proceedings of the XVI Joint Colloquium of the Byurakan and Abastumani Astrophysical Observatories, held on 23-27 September 2024, Abastumani, Georgia	AGAC16			163-176	Aug	2025
☐	4152	Malkhasyan, H.	On the Possible Presence of Calendar Elements in the Early Bronze Age Necklace from Gegharot (Armenia)	Proceedings of the XVI Joint Colloquium of the Byurakan and Abastumani Astrophysical Observatories, held on 23-27 September 2024, Abastumani, Georgia	AGAC16			118-131	Aug	2025
☐	4151	Paronyan, G. M.; Mickaelian, A. M.; Abrahamyan, H. V.; Mikayelyan, G. A.; Sukiasyan, A. G.	X-ray properties of extragalactic radio sources	Proceedings of the XVI Joint Colloquium of the Byurakan and Abastumani Astrophysical Observatories, held on 23-27 September 2024, Abastumani, Georgia	AGAC16			96-102	Aug	2025
☐	4150	Mickaelian, A. M.; Abrahamyan, H. V.; Paronyan, G. M.; Mikayelyan, G. A.; Andreasyan, R. R.; Sukiasyan, A. G.; Hambardzumyan, L. A.; Mkrtchyan, V. K.; Gasparyan, A. A.; Dennefeld, M.	BAO Research Department "Astronomical Surveys": summary of recent results	Proceedings of the XVI Joint Colloquium of the Byurakan and Abastumani Astrophysical Observatories, held on 23-27 September 2024, Abastumani, Georgia	AGAC16			81-95	Aug	2025

Գրախոսվող հոդվածներ 2014-2025թթ.

Journals	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024	2025	All
Astrophysical Journal	3	1	2	0	0	0	0	0	0	0	0	0	6
Astronomical Journal	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Astronomy & Astrophysics	3	2	4	3	1	3	1	2	0	1	3	3	26
Monthly Notices of the RAS	1	0	5	1	2	3	2	1	5	2	1	4	27
АЖ / ПАЖ / AstBul	0	1	1	1	1	0	1	1	1	0	1	0	8
Other international journals	3	6	14	11	10	8	5	11	8	13	12	5	106
Ընդամենը միջազգային	10	10	26	16	14	14	9	15	14	16	17	12	173
Астрофизика / Astrophysics	16	7	10	10	8	10	8	9	5	8	5	6	102
Communications of BAO	0	0	0	12	28	15	26	31	29	34	32	29	236
Reports of NAS RA	0	0	0	0	0	0	0	0	1	0	0	0	1
Other local journals	0	0	0	1	0	1	2	4	1	0	0	0	9
Ընդամենը տեղական	16	7	10	23	36	26	36	44	36	42	37	35	348
Հոդվածներ գրքերում	0	0	0	0	0	0	0	20	0	0	0	2	22
Ընդամենը	26	17	36	39	50	40	45	79	50	58	54	49	543

Միջազգային համագործակցություն

23 պետություն



Համագործակցություններ, պայմանագրեր

- ԲԱ – Հորդանանի համալսարան (UJ)՝ համագործակց. հուլագիր 2025
- ՀՎԱ – Չինաստանի ՎԱ՝ համագործակցության հուլագիր 2025
- ՀԱԸ – Իրանի աստղագիտական ընկերություն, 2025
- ԲԱ – Չինաստանի ԳԱ ազգային աստղադիտարան (NAOC) 2024
- ԲԱ – Աբասթումանի աստղադիտարան (Վրաստան) 2024
- ԲԱ – Շարժահի համալսարան (ԱՄԷ)՝ համագործակց. հուլագիր 2023
- ԲԱ-Լայդեն – Erasmus+ ICM Project Management, 2023-2025
- ԲԱ – CAO պայմանագիր՝ աստղադիտակներ, դիտումներ և այլն
- ԲԱ – CAO – Սանտյագո դե Կոմպոստելա՝ սպեկլ-ինտերֆերոմետրիա
- ԲԱ – ԴԱՈՍ, Մոսկվայի պետական համալսարան, Ռուսաստան
- ԲԱ – ՆԻԱՇԱՆ, Մոսկվա, Ռուսաստան
- ԲԱ – ՆԿՈՎ պայմանագիր՝ գամմա-բարստերներ
- ԲԱ – Ռոսկոսմոս՝ տիեզերական անվտանգության ոլորտում 2014-2025
- ԲԱ – Ստ. Պետերբուրգի պետական համալսարան
- ԲԱ – Հայ-ռուս. համալս. – Ստ.Պետերբուրգի պոլիտեխ. համալս.
- ԲԱ – ՄԱՄ՝ Հարավ-Արևմտյան և Կենտրոն. Ասիայի ԱՋՏԳ 2015-2027
- SCS-BMBF – Հայ-գերմանական՝ Արեգ Միքայելյան – ՀՎԱ-GAVO 2017-2019
- ԲԱ – IAP (Միշել Դենեֆելդ) – Գայա փոփոխական աստղեր
- ԲԱ – Վարշավայի համալսարան՝ Գայա անցողիկ աղբյուրներ
- ԲԱ – ԻԱՊԻ աստղաինֆորմատիկայի ոլորտում

Կապը ՀՀ համալսարանների հետ

1. **Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)**, Ֆիզիկայի ֆակուլտետ – գիտական համագործակց. ակտիվ գալակտիկաների թեմայով, համարել գիտաժողովներ, դասավանդում ԲԱ գիտն. կողմից, գիտ. կադրերի պատրաստում, թեմաների ղեկավարում, ԲԱ ուս. պրակտիկա:
2. **Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (ՀԱՊՀ)** – աստղագիտ. սարքաշինություն, ինժեներական կադրերի պատրաստում, ուսանողների պրակտիկա:
3. **Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան (ՀՌՀ)** – դասավանդում ԲԱ գիտնականների կողմից, գիտական կադրերի պատրաստում, եռակողմ համաձայնագիր Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի անվան պոլիտեխնիկական համալսարանի հետ:
4. **Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալս. (ՀՊՄՀ)** – աստղագիտ. կրթություն, լավագույն կադրերի ներգրավում գիտ. հետազոտ. մեջ:
5. **Ճարտարապետության և շինարարարության Հայաստանի ազգային համալս. (ՃՇՀԱՀ)** – Զորաց Քարեր հնագույն աստղագիտ. վայրի չափագրում և ուսումնասիրություն:
6. **Վալերի Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալս. (ԵՊԼՀ)** – աստղագիտ. գիտելիքները հայկական բանահյուսության մեջ, ուսանողական պրակտիկա:
7. **Հայաստանում ֆրանսիական համալսարան (ՀՖՀ)** – աստղաինֆորմատիկայի մասնագետների պատրաստում:
8. **Հայաստանի եվրոպական համալս. (ՀԵՀ)** – դասավանդում ԲԱ գիտնականների կողմից:
9. **Հայաստանի տուրիզմի ինստիտուտ (ՀՏԻ)**, Ռուսաստանի Տուրիզմի միջազգային ակադեմիայի մասնաճյուղ – գիտ. տուրիզմ, գիտական տուրիզմի ամբիոնի հիմնադրում:
10. **ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն (ԳԿՄԿ)** – նախապատրաստական փուլում է:

2.6մ աստղադիտակ – ZTA-2.6



In operation since 1975

Main observing equipment: *SCORPIO focal reducer, VAGR multi-pupil spectrograph, Speckle Interferometer (guest instrument)*



[Home](#)

[Instrumentation and methods](#)

[Applying for the time](#)

[Schedule of current observations](#)

[Schedule archive and Scientific report](#)

[Acknowledge US](#)


Description

The ZTA-2.6 telescope is the largest observational instrument of BAO. The telescope is located near vil. Byurakan at the altitude of 1406 m above sea-level. The coordinates of the site are longitude 40°20'29", latitude +44°16'29".



Main mirror diameter	260 cm
Mirror weight	4 tons
Mirror material	Sital
Mounting	Equatorial
Aperture ratio (D/F)	1:3.85
Primary focus	

Շմիդտի համակարգի 1մ աստղադիտակ (102/132/213)



In operation since 1960

3 objective prisms: 1.5° , 3° , 4°

Դիտողական աստղագիտության բաժին

Բաժնի ղեկավար. **Ալեքսեյ Գրավե**

Բաժնի կազմը (astronomers, engineers): Վազգեն Գաբրիելյան, Արտյոմ Մկրտչյան, Վազգեն Մնացականյան

Գործունեություն.

- ☐ 2.6m telescope
- ☐ 1m Schmidt telescope
- ☐ Small telescopes
- ☐ Astronomical instrumentation

2024 – Փորձնական դիտումներ, 2025-ի / 2026-ի դիտողական հայտեր Կարևորագույն արդյունքներ.

- ԲԿԳԿ սարքավորման դրամաշնորհի դիմում (ռոբոտային աստղադիտակի)
- 2.6մ-ի անսարքությունների կարգավորում և կարգաբերում, EEV ընդունիչի կարգաբերում, դիտումների սպասարկում
- Երիտասարդ մասնագետներից ԲԱ դիտողական խմբի ձևավորում
- Դիտումների հաճախում և փորձի ձեռքբերում
- Դիտումների մշակման համակարգի ստեղծում

Աստղաինֆորմատիկայի բաժին

Բաժնի ղեկավար. **Գոռ Միքայելյան**

Բաժնի կազմը (engineers, web administrators, programmers, operators).

Դերենիկ Անդրեասյան, Արշալույս Անդրեասյան

Գործունեություն.

- ❑ Համակարգչային ցանց, համացանց, ԲԱ համացանցային կայքէջ,
- ❑ Գիտական գրադարանի թվայնացում, դիտողական արխիվի թվայնացում,
- ❑ Հայկական վիրտուալ աստղադիտարան (ՀՎԱ, ArVO)
- ❑ Հաշվողական աստղաֆիզիկա, աստղավիճակագրություն, մոդելավորում, անիմացիաներ, սիմուլյացիաներ, պատկերավորում, լաբ. աստղաֆիզիկա, մեքենայական ուսուցում, ԱԲ, այլ խնդիրներ

Կարևորագույն արդյունքներ.

- **ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ հետ համագործակցությունը** (+ UFAR students)
- Վիրտուալ աստղադիտարանների հայ-գերմանական ծրագիրը՝ DFBS սպեկտրների առցանց ծառայությունը և ցածրդիսպերսային սպեկտրների դասակարգումը: **ՀՎԱ – Չին-ՎԱ համաձայնագիր**
- **Ձեռք է բերվել ինտերակտիվ էկրան-գրատախտակ (smart board)**

2024 – ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնը, **2026** – դիտողական արխիվը

Կիրառական աստղագիտության կենտրոն

Կենտրոնի ղեկավար. **Հայկ Հարությունյան**

Կենտրոնի կազմը. **Ելենա Նիկողոսյան**, + 8 դիտող:

Պայմանագրային աշխատանքների իրականացման ընթացքում երեք դիտակներով դիտումներ կատարվել են ընդհանուրը 201 գիշեր, որի ընթացքում անընդմեջ դիտվել է 3048.3 ժամ, չափումների քանակը՝ 5,952,936, օբյեկտների քանակը 5374:

Տիեզերական անվտանգության գլոբալ ծրագրի մասն է: Նաև՝

GLONASS: 2024 – ՀՀ ԳԱԱ ԵԻՍԻ սեյսմիկ կայան:

Այլ գործունեություն. շինարարական և վերանորոգման աշխատանքներ



Հայ-վրացական կոլոքվիումը



XVII Joint
Byurakan-Abastumani (Armenian-Georgian)
Astronomical Colloquium



5-9 May 2025, Byurakan, Armenia

- 05-09 մայիսի 2025թ., Բյուրական
- 17-րդ հայ-վրացական (Բյուրական-Աբասթուման) աստղագիտական կոլոքվիում
- Արեգ Միքայելյան և Ռևազ Ճանիշվիլի – գիտական կազմկոմիտեի համանախագահներ, տեղական կազմկոմիտե՝ Հ. Աբրահամյան, Գ. Միքայելյան և այլք
- Մասնակիցներ (42). ԲԱ՝ 25, ԵՊՀ՝ 3, ՖԿՊԻ՝ 1, ԱբԱ՝ 10, Իրան՝ 1, Նիդերլանդներ՝ 2
- Զեկուցումներ (39). 13՝ հրավիրված, 26՝ բանավոր
- Կոլոքվիումի նյութերը՝ ComBAO 72-1 (06.2025)

Եվրոպական տարեկան համագումարը



EUROPEAN
ASTRONOMICAL
SOCIETY
ANNUAL MEETING

UNIVERSITY COLLEGE CORK, IRELAND
23 - 27 JUNE



- 23-27 հունիսի 2025թ., Կորք, Իռլանդիա
- Եվրոպական աստղագիտական ընկերության (EAS) տարեկան համագումար: 2007-ին՝ Հայաստանում (JENAM-2007)
- 15 գիտաժողով, 53 հատուկ նստաշրջան, 10 լանչ նստաշրջան, պլենար զեկուցումներ, ԵԱԸ մրցանակներ
- 1500 ֆիզիկական + 700 վիրտուալ մասնակից
- ՀՀ մասնակիցները (11). Ա. Միքայելյան, Ե. Նիկողոսյան, Հ. Աբրահամյան, Ն. Ազատյան, Ա. Սամսոնյան, Դ. Անդրեասյան, Ա. Սուքիասյան, Վ. Մկրտչյան, Ա. Գասպարյան, Գ. Բալեյան, Լ. Դարբինյան
- 6 զեկուցում, 5 կարճ զեկուցում, 5 գիտապաստառ
- Ա. Միքայելյանի մասն. և կարճ զեկուցումը ԵԱԸ խորհրդի նիստին

Բյուրականյան ամառային դպրոցը


IAU SOUTH WEST AND CENTRAL ASIAN REGIONAL OFFICE OF ASTRONOMY FOR DEVELOPMENT

IV REGIONAL ASTRONOMICAL SUMMER SCHOOL “Astronomy and Data Science”

8-12 September 2025, Byurakan, Armenia

- 08-12 սեպտեմբերի 2025թ., Բյուրական
